

гия и стилистический синтаксис; разные проявления стилистико-произносительных особенностей, имеющих место в разных речевых единствах. В частности, речь идет о стилистических особенностях прозы и поэзии.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՐՊԻ ՇՈՒՐԶ (անգլերենի և հայերենի նյութի հիման վրա)

Կ. Ա. ՎԵԼՅԱՆ

*Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ պրոֆեսոր*

Ինչպես հայտնի է, թարգմանությունը բարդ և բազմակողմանի գործընթաց է, և այն իրավամբ համարվում է արվեստի հատուկ տեսակ: Հաճախ թարգմանության մասին խոսելիս նշում են մեկ լեզվից մյուսը լեզվամիջոցների փոխանցելու մասին: Իրականում թարգմանության գործընթացը չի սահմանափակվում միայն մի լեզվի միջոցների փոխարինումով մեկ այլ լեզվի միջոցներով: Թարգմանության ժամանակ բախվում են տարբեր մշակույթներ, դարաշրջաններ, մտածելակերպեր և այլն: Ուստի թարգմանությամբ զբաղվում են մշակութաբաններ, հնէաբաններ, հոգեբաններ, գրականագետներ, և թարգմանության տարբեր հայեցակերպերը կարող են դառնալ տարբեր գիտակարգերի ուսումնասիրության առարկաներ: Սույն հոդվածի հիմքում ընկած է թարգմանության **հանրալեզվաբանական** հայեցակերպը: Վերջինս հաճախ հաշվի չեն առնում թարգմանություններում, ինչը կարող է հանգեցնել թարգմանության ոչ համարժեքությանը, իսկ թարգմանության հիմնական խնդիրներից մեկը, ինչպես հայտնի է, թարգմանության համարժեքության ապահովումն է:

Հանրալեզվաբանության հիմնական առարկան է լեզվի և հասարակության միջև փոխհարաբերությունը: Հասարակության և լեզվի միջև գոյություն ունեն տարաբնույթ հարաբերություններ: Ինչպես նշում է հայտնի հանրալեզվաբան Զ. Ի. Գամփերզը, “հանրալեզվաբանությունը փորձում է գտնել հարաբերակցություն սոցիալական և լեզվական կառուցվածքների միջև” (Gumperz, 1971, 223): Սոցիալական կառուցվածքի տակ այս դեպքում հասկանում ենք սոցիալական խավերը (սոցիալական շերտերը), որոնք անմիջականորեն հարաբերակցվում են սոցիալ-տնտեսական չափանիշներով:

Սոցիալական խավ որոշելիս հաշվի են առնվում այնպիսի գործոններ, ինչպիսիք են մասնագիտությունը, բնակավայրը, կրթությունը, եկամտի և աշխատավարձի չափը: Ըստ նշված չափանիշների՝ տարբերակում են բարձր խավ, միջին խավ, ստորին բանվորական խավ և այլն: Երբեմն շերտավորումը ընդհանուր է լինում. օրինակ՝ «բարձր խավ», «միջին խավ», այլ դեպքում կարող է լինել «միջին խավի բարձր շերտ», «միջին խավի միջին շերտ» և այլն:

Սոցիալական խավի և լեզվի գործածության միջև գոյություն ունի սերտ կապ:

Ընդհանուր առմամբ, “լեզվական շերտավորվածությունը արտացոլում է հասարակական շերտավորվածությունը” (Mesthrie et al., 2009, 94): Անձի հասարակական (սոցիալական) դիրքը արտացոլվում է իր կողմից օգտագործվող կառույցների և բառերի միջոցով:

Գեղարվեստական արձակի թարգմանության ժամանակ հաճախ անտեսում են կերպարների այս կամ այն խավին պատկանելը՝ կերպարի հասարակական կարգավիճակը: Չնայած որ բավականին գրականություն կա թարգմանության տարբեր հայեցակետերի վերաբերյալ՝ դրանք, որպես կանոն, վերաբերում են թարգմանության քերականական, բառային և ոճական հայեցակետերին: Սակայն ոչ պակաս կարևոր գործոն, ինչպիսին է հանրալեզվաբանական գործոնը, միշտ չէ, որ հաշվի է առնվում թարգմանության ժամանակ: Կերպարների հասարակական կարգավիճակը, նրանց՝ այս կամ այն հասարակական խավին պատկանելը, ինչպես նաև հասարակական համատեքստը շատ կարևոր գործոններ են, որոնք անխտիր պետք է հաշվի առնել հատկապես գեղարվեստական արձակի թարգմանության ժամանակ: Ուստի վերջիններս կարևոր և հաճախ որոշիչ դեր են խաղում թիրախ լեզվում քերականական կառուցվածքի ընտրության հարցում: Մեր աշխատանքում փորձել ենք ցույց տալ հանրալեզվաբանական գործոնի կարևորությունը անգլերենից հայերեն թարգմանություններում: Որպես վերլուծության նյութ ընտրվել են Ջեկ Լոնդոնի “Martin Eden”, Թեոդոր Դրայզերի “An American Tragedy” և Սոմերսեթ Մոյեմի “The Theater»” ստեղծագործությունները և դրանց հայերեն թարգմանությունները: Վերլուծել ենք տարբեր տարիքի և հասարակական խավերին պատկանող կերպարների բանավոր խոսքի բառային, քերականական, մասնավորապես շարահյուսական, առանձնահատկությունները:

Բնագրի ստորև բերված հատվածում, որն արտաբերվում է Մարտին Իդենի՝ ամերիկյան հասարակության ցածր խավի ներկայացուցչի կողմից, կարելի է նկատել այնպիսի քերականական և հնչյունաբանական առանձնահատկություններ, որոնք հանդիպում են ստորին խավի, միջին խավի ցածր շերտի ներկայացուցիչների խոսքում: Դրանք են մասնավորապես կրկնակի ժխտման օգտագործումը միևնույն նախադասության մեջ, որ հարիր չէ անգլերենի քերականության կանոններին, ինչպես նաև ակնհայտ է հասարակաբանության կիրառումը (“d” տառը “and” բառի մեջ, “g”-ն “-ing” ձևում, “i”-ն “family”-ում; “ain’t” ձևը “is not”-ի փոխարեն) Օրինակ՝

“Hold on, Arthur, my boy,” he said, attempting to mask his anxiety with facetious utterance. “This is too much all at once for yours truly. Give me a chance to get my nerve. You know I didn’t want to come, an’ I guess your fam’ly **ain’t hankerin’ to see me neither.**” (London, 18)

-Արթուր, բարեկամս, մի քիչ շունչ առնենք, - ասաց կատակի ձևով՝ փորձելով վարագործել իր շփոթությունը: - Առաջին անգամվա համար չափազանց շատ է այս ամենը: Թույլ տվեք մի քիչ **սրտապնդվել**: Ախր դուք գիտեք, որ ես չեմ **ցանկանում** գալ, իսկ ձերոնք էլ, բնականաբար, ինձ անհամբեր չեն սպասում: (Լոնդոն, 8)

Մեր կարծիքով՝ ոճական և գործաբանական առանձնահատկությունները ընդգծելու համար հայերեն թարգմանության մեջ կարելի է օգտագործել “սր-

տապանդվեմ” ձևը “սրտապանդվել”-ու փոխարեն, քանի որ առաջինն ավելի բնորոշ է հայ հասարակության ստորին խավի ներկայացուցիչներին: Նմանապես “...ես **չէի ցանկանում** զալ” արտահայտության կիրառումը ավելի բնորոշ է բարձր խավի կամ միջին խավի բարձր շերտի ներկայացուցիչների խոսքին, ուստի “Ախր դուք գիտեք, որ ես **չէի** ուզում զայի” ձևը հայերեն թարգմանության մեջ ավելի կընդգծեր կերպարին բնորոշ խոսքային առանձնահատկությունները:

Է. Աղայանը բառապաշարի հասարակական (սոցիալական) տարբերակման մասին հետևյալ միտքն է արտահայտում. «Լեզվի բառապաշարը ընդգրկում է բոլոր բառերը՝ անկախ նրանց գործածության զանազան սահմանափակումներից ու տարբերակումներից, բայց սա **չի** նշանակում, թե բոլոր բառերը հավասարապես ու անխտիր գործածվում են տվյալ լեզուն կրող հասարակության բոլոր անդամների կողմից: Բառապաշարի հիմնական մասը, անշուշտ, առանց որևէ սահմանափակման ընդհանուր է հասարակության բոլոր անդամների համար՝ անկախ նրանց դիրքից, զբաղմունքից, դասային ու դասակարգային պատկանելությունից, սեռից, տարիքից: Այդ կարգի բառերը կազմում են բառապաշարի **հասարակայնորեն ընդհանրական** շերտը»:(Սարգսյան, 144):

Բերենք ևս մի քանի օրինակ.

1. “Excuse me, miss, for buttin’ in that way. I guess the real facts is that **I don’t know nothin’** much about **such things**. It **ain’t** in my class. But I’m goin’ to make it in my class. (London, 28)

- Ներեցե՛ք, միսս, որ ես այդ խոսակցությունը սկսեցի ձեզ հետ, - ասաց նա: - ճիշտն ասած, ես շատ **չեմ** հասկանում **այդպիսի բաներ**: Դա իմ խելքի բանը չէ... բայց ես կանեմ ամեն ինչ, որպեսզի դա իմ խելքի բանը դառնա: (Լոնդոն, 18)

2. “I must a-missed ‘em,” he announced. “What I read was the real goods. It was all lighted up an’ shining, an’ it shun right into me an’ lighted me up inside, like the sun or a searchlight. That’s the way it landed on me, but I guess I ain’t up much on poetry, miss.”(London, 27)

-Հավանական է, որ **այդպիսի տողեր** աչքովս չընկան, -ասաց նա: - Իմ կարդացածը անկասկած շատ լավ էր: Կարծես ինչ-որ լույս ճառագայթում և լուսավորում է սիրտդ լուսարձակի նման: Ինձ այդպես թվաց, միսս. թերևս ես ոչինչ **չեմ** հասկանում ոտանավորներից: (Լոնդոն, 17)

Նշված հատվածների թարգմանության մեջ հանդիպում ենք “**այդպիսի, այդպես...**” ձևերը ստորին խավի ներկայացուցիչների խոսքում: Մեր կարծիքով՝ “**էդպիսի, էդպես**” տարբերակները ավելի ցայտուն կարտահայտեին բնագրի այս հատվածների ոճական երանգը: Առաջարկված տարբերակները առկա են նույնիսկ հայ հասարակության միջին խավի ներկայացուցիչների խոսքում:

Երկրորդ օրինակում ակնհայտ է ոչ ստանդարտ անգլերենի կիրառությունը՝ «What I read is the real goods»: Մեր կարծիքով՝ ավելի տիպիկ կլինեին այս հատվածը թարգմանել «իմ կարդացածը իրոք կարգին բան էր», որպեսզի պահպանվի բնագրում արտահայտված նույն խոսքային ոճը:

Սեկ այլ համատեքստում ստորին խավին պատկանող երկու երիտասարդ աղջիկներ թատերական ներկայացումից հետո ցանկանում են «լավ ժամանակ

անցկացնել» Մարտին Իդենի հետ.

“Hold on, Bill! What’s yer rush? You are not goin’ to shake us so sudden as all that?”
(London, 69)

-Կաց Բիլլ, ու՞ր ես շտապում, **մի՞թե ուզում** ես փախչել մեզանից: (Լոնդոն, 61)

Կարծում ենք, թարգմանությունը ավելի հաջողված կլիներ ոճային առումով, եթե «մի՞թե ուզում ես փախչել մեզանից» նախադասության փոխարեն օգտագործվեր «հոմ չե՞ս ուզում փախչել մեզանից» տարբերակը, քանի որ, ինչպես նշեցինք, երկու աղջիկները ստորին խավի ներկայացուցիչներ են, ինչը երևում է նաև նրանց խոսքային առանձնահատկություններից:

Ստորին խավի ներկայացուցիչներին բնորոշ է օգտագործել պարզունակ շարահյուսական կառույցներով պարզ համառոտ նախադասություններ: Նրանք օգտագործում են բավական մեծ թվով թերի նախադասություններ: Թերի նախադասությունները բնորոշ են միջին խավի ստորին շերտին և ստորին խավին ավելի, քան բարձր խավի ներկայացուցիչներին: Օրինակ՝

He forgot where he was and Bernard Higginbotham’s existence, till that gentleman demanded:

“ Seen a ghost?”(London, 48)

Նա մոռացավ, թե որտեղ է գտնվում, մոռացավ Բեռնարդ Հիգգինբոթամի գոյությունը և ուշքի եկավ միայն այն ժամանակ, երբ այդ ջենտլմենը հարցրեց.

- Ի՞նչ է, աչքիդ տեսի՞լք երևաց:(Լոնդոն, էջ 38)

Անգլերենի “Seen a ghost?” թերի նախադասությունը թարգմանված է հայերեն «Ի՞նչ է, աչքիդ տեսի՞լք երևաց» նախադասությամբ, այսինքն՝ «ի՞նչ է» մասնիկի օգնությամբ՝ հայերենի անջատական հարցերի կցորդային մասնիկներից մեկի օգնությամբ, որը փոխանցում է բնագրի այս հատվածում առկա հեզմանքը, ծաղրանքը:

Ինչպես հայտնի է, անգլերենում առօրյա - խոսակցականի հիմնական հատկանիշներից է անջատական հարցերի կիրառումը: Վերջինս կարող է տարբեր ձևեր ունենալ՝ կախված խոսքային իրավիճակից և անհատի հասարակական կարգավիճակից: Կարծում ենք, որ անջատական հարցերը հասարակայնորեն կարևոր լեզվական ձևեր են, որոնք կարող են որոշակիորեն ազդարարել անհատների հասարակական կարգավիճակի մասին: Ասվածը վերաբերում է նաև հայերենի բանավոր խոսքին, մինչդեռ հայերենի անջատական հարցերի ձևերը չեն համապատասխանում անգլերենի անջատական ձևերին: Ուստի հայերեն թարգմանություն կատարելիս՝ թարգմանիչը պետք է զգուշորեն ընտրի այս կամ այն համարժեքը, հակառակ դեպքում թարգմանության մեջ կարող է նկատվել ոճական և գործաբանական շեղում բնագրից:

Ընդհանուր առմամբ, այն փաստը, որ անհատի խոսակիցը միևնույն խավի ներկայացուցիչ է, ունի նույն կրթական մակարդակը և երկուսն էլ նույն տարիքի են, ստեղծում է հաղորդակցման ազատ հոգեբանական վիճակ, որն էլ արտացոլվում է անհատի խոսքում: Ստորև բերված հատվածում հերոսը խոսում է իր քրոջ հետ, որը նույնպես ստորին խավի ներկայացուցիչ է: Գլխավոր հերոսը որոշ պատմություններ է գրել և ցանկանում է, որ քույրն իր կարծիքը հայտնի դրանց վերաբերյալ:

“But if you did sell it , what do you think you’d get for it?”

“Oh, a hundred dollars. That would be the least, the way prices go.”

“My! I do hope you’ll sell it!”

“Easy money, *eh*?” Then he added proudly: “I wrote it in two days. That’s fifty dollars a day.” (London, 116)

- Իսկ եթե հաջողվի հրատարակել, ինչքա՞ն դրամ կստանաս դրա համար:

- Ա՛, մի հարյուր դոլար ամենաքիչը՝ այժմյան գնով:

- Օհո՛, հուսամ, որ քեզ կհաջողվի խցկել մի տեղ:

- Վատ գումար չէ, **ճիշտ է**: - Եվ նա հպարտությամբ ավելացրեց, - նկատի ունեցիր, որ ես գրել եմ երկու օրում: Օրական հիսուն դոլար: (Լոնդոն, 110)

Հայերեն տարբերակում նկատում ենք անջատական հարցերի ոչ այնքան համապատասխան թարգմանություն: Կարծում ենք, որ թարգմանությունը չի համապատասխանում ոճային և գործաբանական առումներով, ինչը տվյալ դեպքում **“Ճիշտ է”** ձևի օգտագործման արդյունքն է: Վերջինս ավելի գրական ձև է և հագիվ թե այն գործածվեր ստորին խավի ներկայացուցչի կողմից: “Վատ գումար չի, չէ՞” ձևը ավելի բնորոշ կլիներ այս հատվածում: Հայ հասարակության ստորին խավը նույաես ավելի շուտ կօգտագործեր “վատ գումար չի” ձևը, քան “վատ գումար չէ” վերջինս լինելով ճիշտ ձև հայերենի քերականության մեջ:

Հետևյալ հատվածում ներկայացված է “American Tragedy” վեպից մի հատված, որտեղ գլխավոր կերպար Քլայդը՝ ամերիկյան հասարակության միջին խավի ցածր շերտի ներկայացուցիչ, զրուցում է Հորտենզիայի՝ ցածր խավի բարձր շերտի ներկայացուցչի հետ:

“Oh, no, *he don’t either*,” replied Hortense. “But I don’t want to talk about him. *Watcha doin’ around six o’clock tonight?*”

“Oh, gee!” exclaimed Clyde disappointedly. “You don’t mean to say you got to – night free, *have you?*”

- **Ոչ, ոչ, ճիշտ չէ**, - պատասխանեց Հորտենզիան: - Բայց ես նրա մասին չեմ ուզում խոսել: Այսօր ժամը վեցից հետո գործ ունե՞ք:

- Օ՛հ, ափսոս, - բացականչեց Քլայդը հուսախաբված: - **Մի՞թե այս երեկոյան ազատ եք, ի՞նչ ցավալի է**:

Ինչպես տեսնում ենք, հայերեն համարժեքում կիրառված է **Մի՞թե այս երեկոյան ազատ եք** տարբերակը, որն իր իմաստաբանությամբ և ոճով չի համապատասխանում տվյալ սոցիալ համատեքստին և առավել ևս Քլայդի հուզական վիճակին: **Մի՞թե այս երեկոյան ազատ եք տարբերակի** փոխարեն մենք կառաջարկեինք առավել խոսակցական տարբերակ *հոմ* առօրյա-խոսակցական մասնիկով. *Հոմ ազատ չե՞ք*: Ինչ վերաբերում է Հորտենզիային, ապա հասարակական առումով նա պատկանում է ցածր խավի բարձր շերտին, ինչը կարելի է հաստատել բազմաթիվ ոչ գրական-քերականական կառույցներով, ինչպիսիք են, օրինակ՝ ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնությունը (*he don’t*), կամ *Whatcha doin’ around six o’clock tonight?* կառույցի կիրառումը *What are you doing?* ստանդարտ կառույցի փոխարեն: Այնուամենայիվ, թարգմանության մեջ մենք հանդիպում ենք **Ոչ, ոչ, ճիշտ չէ**, որը, ըստ մեզ, չի համապատասխանում հերոսուհու թե խոսքին, թե հասարակական կարգավիճակին:

Ներկայացնենք անջատական հարցերի թարգմանության ևս մի օրինակ:

Presently he blew his nose.

"I'm beginning to feel better now. But, my God, you shattered me."

"It's not a bad scene, *is it?*"

"The scene be damned, it was you. You just wrung my heart. The critics are right, damn it, you're an actress and no mistake." (Maugham, 32)

Մայքլը մաքրեց քիթը:

- Կարծես անցավ: Բայց Աստված վկա, քո խաղը ցնցեց ինձ:

- Վատ տեսարան չէր, **այնպես չէ՞:**

- Գրողի ծոցը տեսարանը: Կու էիր լավը: Սիրտս տակնուվրա արեցիր: Քննադատները ճիշտ են ասում. դու տաղանդավոր դերասանուհի ես: Այստեղ այլ կարծիք չի կարող: (Մոեմ, 32)

Թատրոնի բեմադրիչ Մայքլ Գոսսլինը խոսում է քատրոնի սկսնակ դերասանուհի Ջուլիա Լամբլեթի հետ: «Այնպես չէ՞, այդպես չէ՞» ձևերը օգտագործվում են ավելի պաշտոնական խոսքում, ուստի կարծում ենք, որ դերասանուհու՝ միջին խավի ներկայացուցչի խոսքին այնքան էլ բնորոշ չէ «այնպես չէ՞» կցորդի գործածումը հատկապես այս ոչ պաշտոնական ոճում: Գտնում ենք, որ միջին խավի ներկայացուցչի խոսքին ավելի բնորոշ է ստանդարտ մասնիկի օգտագործումը՝ «չէ՞» կամ «ճիշտ է» ձևը:

Այսպիսով, կարելի է հանգել այն եզրակացության, որ անհատների խոսքային առանձնահատկությունները որոշում են մի շարք գործոններ, այն է լեզվական, հասարակական, տարիքային, հոգեբանական և այլն: Եվ անհատի հասարակական կարգավիճակը և նրա խոսքային առանձնահատկությունները կարևոր դեր են խաղում թարգմանության մեջ այս կամ այն համարժեքի ընտրության հարցում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Gumperz J. J.*, Language in Social Groups, Stanford, CA: Stanford University Press, 1971.
2. *R. Mesthrie, J. Swann, A. Deumert, W. Leap*, Introducing Sociolinguistics (second edition) Edinburgh University Press, 2009.
3. **Սարգսյան Ա.** (խմբ.), Հանրալեզվաբանության դասընթաց, Պրակ Բ, Երևան, 2002:
4. *J. London*, Martin Eden, Moscow, 1953.
5. *W. Somerset Maugham*, Theatre, Moscow, 1985.
6. *Th. Dreiser*, An American Tragedy, Moscow, 1951.
7. **Ջ. Լոնդոն, Մարտին Իդեն**, Երկերի ժողովածու, հ. վեցերորդ, Երևան, 1966:
8. **Ա. Մոեմ**, Թատրոն, Երևան, 1985:
9. **Թ. պրայլեր**, Ամերիկյան ողբերգություն, Երկերի ժողովածու, հ. ութերորդ, Երևան, 1972:

К ВОПРОСУ О СОЦИОЛИНГВИСТИЧЕСКОМ АСПЕКТЕ ПЕРЕВОДА (НА МАТЕРИАЛЕ АНГЛИЙСКОГО И АРМЯНСКОГО ЯЗЫКОВ)

К. А. Велян

В настоящей статье освещается проблема социолингвистического аспекта перевода художествен-

ной литературы с английского языка на армянский. Во время перевода необходимо учитывать социальное положение героя, что может отражаться в тех языковых формах, которые используются в речи героя. В статье анализируются те случаи неадекватного перевода с английского на армянский, когда, в силу неучета фактора принадлежности героя к определенной социальной прослойке, а также его социального статуса, в переводе происходит смешение прагматического значения и стиливой окраски, которые присущи оригиналу. Автор статьи предлагает свои варианты перевода.

ON SOCIOLINGUISTIC ASPECT OF TRANSLATION (BASED ON ENGLISH AND ARMENIAN)

K. A. Velyan

This article emphasizes the importance of sociolinguistic aspect in the process of translation of fiction from English into Armenian. The main argument in the article is that a translator should take into consideration the social background and status of the hero, which is reflected in his linguistic forms. The article highlights those points where there is divergence in pragmatic meaning and style in the translation, which was caused by the overlook of the social status of the speaker. The author of the article makes suggestions as to what linguistic forms would be most appropriate in the Armenian translation.

THE RELATION OF INNER SPEECH TO THE TEXTUAL CATEGORIES OF COHESION AND COHERENCE

S. S. AMIRKHANYAN

Lecturer of Gavar State University

In modern literature appeared the style of writing which makes disorder in text. Between sentences, there are no structural relations, and this is reason why the study of cohesion and coherence become important. A text is a unit of language in use. It is not a grammatical unit, like a clause or a sentence; and it is not defined by its size. (Halliday and Hasan 1976, p.1) Text is such unity in which everything has close connection with each other. When we analyze one component of text it always brings necessity of analyzing another component, because they are related to each other.

Cohesion and Coherence were considered to be synonymous terms for a long time. Cohesion and coherence are terms used in discourse analysis and text linguistics to describe the properties of written texts.

At the end of 19th century linguists separated them from each other; Coherence can be thought of as how meanings and sequences of ideas relate to each other; How is made the main idea of the text. Cohesion is the surface of the text - How sentences are structured, how prepositions are used, how words are selected and so on. How is cohesion different from coherence? It is difficult to separate the two. However, think of coherence as the text making sense as a whole at an ideas level, and cohesion as rather more mechanical links at a language level. You can imagine that it is possible for a piece of writing to